Հուսիկ Արա

Չես հերիքում

Դու անընդհատ և անհատնում շատ ես,
մինչդեռ ամեն տեղ քո պակասն եմ ես զգում:

Թափվող անձրևը դու ես՝ կաթիլ-կաթիլ,
ծագող արևը դու ես՝ շող առ շող,
համընթաց քամին ես՝ ալիք-ալիք:
Իմ հացն ես ամեն օր,
իմ ջուրն ես բոլոր ժամերին,
և օդը, որ շնչում եմ:
Սիրտ ես կրծքիս տակ,
հոգի ես իմ մարմնին,
և արյուն՝ երակներիս մեջ.
ես ապրում եմ քեզ:
Իմ խոսքն ու լռությունն ես,
աշխարհն ես ու մենության ահը:

Դու ամեն տեղ և ամեն ինչի մեջ ես,
որովհետև միշտ գտնում եմ քեզ,
ահավասիկ սպասում, տագնապ եմ ու որոնում
և շարունակ չեմ հագենում.
շատ ես, հատիկ-հատիկ առատ ես,
սակայն պակաս ու անվերջ քիչ ես
և միշտ մի կում չես հերիքում: